

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

17 ապրիլի, 2020 N 44

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԴԻԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ՝

1. Սահմանել արտակարգ դրության ժամանակահատվածում կորոնավիրուսային վարակի (COVID-19) հետևանքով մահացած անձանց դիակների տեղափոխման և հուղարկավորման կանոնները՝ համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահին:



Recoverable Signature

X

VERIFIED OCSP 17/04/20 20:19:47 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

Արտակարգ դրության ժամանակահատվածում կորոնավիրուսային վարակի (COVID-19) հետևանքով մահացած անձանց դիակների տեղափոխման և հուղարկավորման

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 5.1 մասի՝ Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հաստատված ախտորոշմամբ անձի մահվան դեպքում ախտաբանաանատոմիական հերձումներ չեն իրականացվում: Փոխարենը՝ գործում են հետևյալ կանոնները՝

1. Պացիենտի՝ Կորոնավիրուսային վարակով պայմանավորված մահվան դեպքում դիակը ծածկվում է սավանով և տեղափոխվում դիակի համար նախատեսված անջրանցիկ պարկ (այսուհետ՝ պարկ), դաստակին փակցվում է նույնականացման տեղեկություն պարունակող նշան, այնուհետև պարկը պինդ կապվում է սկզբից մինչև վերջ կայծակ ճարմանդի միջոցով այնպես, որ բացառվի դիակից հեղուկի արտահոսքի հնարավորությունը: Դիակի նույնականացման տեղեկությունը (դաստակին փակցվածի նման) փակցվում է նաև դիակի համար նախատեսված պարկի վրա: Դիակը պարկ տեղափոխելուց առաջ կիրառվում են հետևյալ կանոնները.

1) դիակից զգուշորեն հեռացվում են կաթետերները, խողովակները և դրենաժները, դրանք հեռացնելու վայրը ախտահանվում է և փակվում կաշուն սպեղանիով.

2) դիակից հեռացված սուր առարկաները տեղադրվում են սուր առարկաների համար նախատեսված կոնտեյների մեջ.

3) կենսաբանական հեղուկների արտահոսքից խուսափելու նպատակով փակվում են դիակի բերանի խոռոչը և քթանցքները.

4) դիակի մշակման ժամանակ առաջացած բոլոր թափոնները հավաքվում և ոչնչացվում են՝ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով սահմանված պահանջների համաձայն.

5) պարկը մշակվում է քլորակրով կամ քլոր պարունակող համապատասխան ախտահանիչներով:

2. Պահպանելով անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցները՝ պարկով դիակը դիատարով տեղափոխվում է բժշկական հաստատության

- դիակի ժամանակավոր պահման վայր, որտեղ դրսից փակցվում է վարակիչ վտանգի մասին մատնանշող միջազգային խորհրդանիշ:
3. Դիակի ժամանակավոր պահման վայրում ախտահանվում է պարկի արտաքին մակերևույթը: Դազադի ներսը ևս ախտահանվում է քլոր պարունակող ախտահանիչներով:
 4. Մահվան մասին բժշկական վկայականը հանգուցյալի հարազատին տրամադրելուց հետո դիակը հարազատին է հանձնվում փակ դազադով:
 5. Դիակը հարազատին հանձնելուց հետո դիակի ժամանակավոր պահման վայրը ամբողջությամբ ախտահանվում է:
 6. Դիակի տեղափոխումը իրականացվում է դազադով, որում դիակը շարունակում է մնալ պարկի մեջ: Դազադն արգելվում է բացել տեղափոխման և հուղարկավորության ցանկացած փուլում:
 7. Դիակը տեղափոխող տրանսպորտային միջոցն ախտահանվում է:
 8. Հանգուցյալին անհրաժեշտ է հնարավորինս շուտ հուղարկավորել (48-72 ժամից ոչ ավել) և խուսափել բազմամարդ հոգեհանգիստներից:

Մահացած անձի իրերի ախտահանումը

9. Մահացած անձի իրերը վառելու անհրաժեշտությունը բացակայում է: Դրանք անհրաժեշտ է զգուշորեն վերցնել պաշտպանիչ ձեռնոցներով, մաքրել և ախտահանել առնվազն 70% էթանոլով կամ այլ ախտահանիչ նյութով՝ առաջնորդվելով համապատասխան հրահանգով:
10. Մահացած անձի հագուստն անհրաժեշտ է լվանալ 60–90°C ջերմաստիճանի ջրով և լվացքի փոշիով:
11. Լվացքի մեքենայով լվանալու հնարավորության բացակայության դեպքում մահացած անձի հագուստը կարելի է թրջել նույն ջերմաստիճանի ջրում՝ օճառով մեծ տարայի մեջ:
12. Լվացքը պետք է խառնել մեծ փայտիկով՝ զգուշանալով տարայից դուրս կաթիլների թափվելուց: Տարան դատարկելուց հետո հագուստի վրա անհրաժեշտ է ավելացնել 0.005% քլորի հիմքով ախտահանիչ և 30 րոպե անց լվանալ արդեն մաքուր ջրով, ապա՝ հագուստը չորացնել արևի ճառագայթների ներքո: